Արձանագրություն N 2

ԾՔ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ծաղկաձոր համայնքի կարիքների համար նստարանների և աղբամանների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Ծաղկաձոր 17 հուլիսի 2018թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Գ.Հայրապետյան/ԳԱՊ/

անդամներ՝ Ն.Խաչատրյան /ԲԱ /

Լ.Խաչատրյան /ԲԱ/

Է.Հովհաննիսյան /ԳԱ/

Ա.Մեսրոպյան /ԳԱ /

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. **Տեղեկություններ ԾՔ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի հուլիսի 17-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարան, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. **ԾՔ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

(Գ.Հայրապետյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	Ա/Ձ Ցոլակ Գևորգյան
2	«ԲԵԼՄԵՏ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին**

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ

3.1 «ԲԵԼՄԵՏ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Ցոլակ Գևորգյան-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ԲԵԼՄԵՏ» ՍՊԸ	Բավարար
Ա/Ձ Ցոլակ Գևորգյան	Բավարար

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Գ.Հայրապետյան)

4.1 Գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Չափաբաժին	Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Առաջարկված գինը
1.«Նստարաններ N1»	Ա/Ձ Ցոլակ Գևորգյան	1950000	1872000 /մեկ միլիոն ութ հարյուր յոթանասուներկու հազար/	0 /զրո/	1872000 /մեկ միլիոն ութ հարյուր յոթանասուներկու հազար/
	<<ԲԵԼՄԵՏ>> ՍՊԸ		1547000 /մեկ միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար/	0 /զրո/	1547000 /մեկ միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար/
2. «Աղբամաններ N2»	Ա/Ձ Ցոլակ Գևորգյան	780000	728000 /յոթ հարյուր քսանութ հազար/	0 /զրո/	728000 /յոթ հարյուր քսանութ հազար/
	<<ԲԵԼՄԵՏ>> ՍՊԸ		513500 /հինգ հարյուր տասներեք հազար հինգ հարյուր/	0 /զրո/	513500 /հինգ հարյուր տասներեք հազար հինգ հարյուր/

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. Ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ <<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-18/13>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<ԲԵԼՄԵՏ>> ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Ա/Ձ Ցոլակ Գևորգյան-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Գ.Հայրապետյան)

6.1 Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի /այսուհետ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի առկայության վերաբերյալ 17.07.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարակելու օրվանից հաշված 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված հարցման պատասխանի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ----------Գ.Հայրապետյան

անդամներ՝ ----------Ն.Խաչատրյան

----------Լ.Խաչատրյան

----------Է.Հովհաննիսյան

----------Ա.Մեսրոպյան

քարտուղար՝----------Ա.Ավետիսյան